# § 8 ՏԵՔՍՏԱՅԻՆ ԽՄԲԱԳՐԻՉ

Մուտքագրման կույր մեթոդ, տեքստային տեղեկատվություն, տեքստային փաստաթուղթ, էլեկտրոնային տեքստային փաստաթուղթ, տեքստային խմբագրիչներ, ամպային տարածք, առցանց տեքստային խմբագրիչներ:



1. Ի՞նչ է տեքստը:
2. Որտե՞ղ կարելի է տեսնել տեքստեր:
3. Ինչպե՞ս կարելի է ստեղծել էլեկտրոնային տեքստ:

**Առաջադրանք**

**Մուտքագրման կույր մեթոդ**

### 5 րոպե նախավարժանք՝ մուտքագրման կույր մեթոդ

Մուտք գործեք https://www.typingclub.com/ հարթակը և կատարեք հերթական վարժությունը:

Տարբեր առարկաներից տնային առաջադրանքներ եք կատարում, շարադրություններ գրում, տարբեր թեմաներից նշումներ կատարում տետրում: Այդ ամենը *տեքստային տեղեկատվություն* է: Նշումներ կատարելիս, հնարավոր է, տեքստի մասերը վերադասավորելու, որոշ բառեր փոխելու և սխալները ուղղելու, տեքստը

կրճատելու կամ վերաշարադրելու անհրաժեշտություն առաջանա: Եթե այդ գործողությունները կատարեք տետրում, ջնջումներ կլինեն, և ստիպված կլինեք նորից ու նորից տեքստն արտագրել, ինչը ժամանակատար է և անհնարին է դարձնում թղթի խնայողությունը: Համակարգչից կամ այլ սարքավորումներից օգտվելիս այդ խնդիրներից հնարավոր է խուսափել: Փաստաթուղթը, որտեղ տեղեկատվությունը ներկայացված է տեքստի տեսքով, կոչվում է *տեքստային փաստաթուղթ*: Համակարգչի կամ այլ սարքավորման հիշողությունում պահպանվող տեքստային փաստաթուղթը կոչվում է *էլեկտրոնային տեքստային փաստաթուղթ*: Հետագայում, խոսելով տեքստային փաստաթղթի մասին, նկատի կունենանք էլեկտրոնային տեքստային փաստաթուղթը: Էլեկտրոնային տեքստային փաստաթղթերի բովանդակության հետ աշխատելու համար նախատեսված ծրագրերը կոչվում են *տեքստային խմբագրիչներ*: Օպերացիոն տարբեր համակարգերում կիրառվում են տեքստային տարբեր խմբագրիչներ:

Տեքստի արագ մուտքագրման ամենատարածված մեթոդներից է մուտքագրման կույր մեթոդը, որը նաև անվանում են տասը մատով տպելու մեթոդ: Մուտքագրման կույր մեթոդը, առանց համակարգչի ստեղնաշարին նայելու, տեքստեր մուտքագրելու մեթոդ է: Տասը մատով մուտքագրելու ժամանակ յուրաքանչյուր մատին համապատասխանում է մեկ հենակետային ստեղն:

Տեքստը արագ մուտքագրելու համար պետք է՝

1. նստել ճիշտ կեցվածքով,
2. չնայել ստեղնաշարին,
3. մուտքագրելիս օգտագործել բոլոր մատները,
4. երկու ձեռքի բութ մատները պետք է լինեն բացատանիշի վրա,
5. ձախ և աջ ցուցամատները պետք է լինեն համապատասխանաբար F և J ստեղների վրա, որոնց վրա կան ելունդներ՝ նախատեսված կույր մուտքագրման ժամանակ կողմնորոշվելու համար,

Մուտքագրման կույր մեթոդի հեղինակն է Ֆրենդ Էդվարդ ՄաքԳուրինը, որն աշխատում էր դատարանում որպես սղագրող: 1888 թ. հուլիսի 25–ին Ցինցինատիում մեքենագրելու արագության մրցույթում նա հաղթում է «Caligraph ութ մատով» մեթոդի հեղինակ Լուի Տրաուբին:

«SOLO ստեղնաշարի վրա» ուսուցման ծրագրի հեղինակն է հայտնի հոգեբան, լրագրող և ուսուցիչ Վլադիմիր Շահիջանյանը: Մեթոդը հնարավորություն է տալիս տեսողության խնդիրներ ունեցող մարդկանց աշխատելու համակարգչի ստեղնաշարով:

Առաջին տեքստային խմբագրիչներից մեկը՝ «Էլեկտրական մատիտ»-ը (Electric Pencil), ստեղծել է 1976 թ. Մայքլ Շրայերը: Ծրագրի ստեղծմանը խթանեց այն, որ Մայքլը հոգնել էր գրամեքենայով տարբեր ծրագրերի համար փաստաթղթեր պատրաստելուց:
Նկարում՝ Մայքլ Շրայերը ցուցադրում է իր Electric Pencil տեքստային խմբագրիչը՝ TRS-80 մեքենայի վրա:

6. տեքստ մուտքագրելիս չպետք է հետևենք տողի ավարտին (երբ կուրսորը հասնում է տողի եզրին, այն ինքնաբերաբար տեղափոխվում է հաջորդ տող),
7. նկարում կնկատեք գունավոր տարածքներ, որոնք ցույց են տալիս յուրաքանչյուր մատի կիրառման տեղը:

Ստեղների դասավորությունը ուսուցանող և մատների շարժիչ հմտությունները զարգացնող բազմաթիվ արդյունավետ ծրագրեր կան՝ վճարովի և անվճար:

## Հարցեր և առաջադրանքներ

1. Ինչ է տեքստային տեղեկատվությունը:
2. Ինչ է էլեկտրոնային փաստաթուղթը:
3. Էլեկտրոնային տեքստային փաստաթղթերի բովանդակությունը մշակելիս ո՞ր ծրագրերն են օգտագործվում:
4. Ինչպե՞ս կարելի է ձեռք բերել տեքստն արագ մուտքագրելու հմտություն:
5. Տեսողության խնդիրներ ունեցող մարդիկ ո՞ր ծրագրից կարող են օգտվել համակարգչի ստեղնաշարով աշխատելիս:

### Առաջադրանք 1

**Մայրենիի դասագրքի տեքստերից ընտրել որևէ պարբերություն և մուտքագրման կույր մեթոդով մուտքագրել համակարգիչ:**

## Ստուգի՛ր գիտելիքներդ

1. **Ընտրել ճիշտ պատասխանը. տեքստային խմբագրիչը՝**
   ա. էլեկտրոնային տեքստային փաստաթղթերի բովանդակության հետ աշխատելու ծրագիր է,
   բ. տեքստի սխալներն ուղղող մարդն է,
   գ. նկարներ ստեղծելու և խմբագրելու ծրագիր է,
   դ. էլեկտրոնային գրամեքենա է:
2. **Ո՞րն է տեքստային խմբագրիչի նպատակը:**
   ա. Էլեկտրոնային տեքստային փաստաթղթերի բովանդակության հետ աշխատանք:
   բ. Տեքստի արտածում տպիչի վրա:
   գ. Տպագիր տեքստի սխալների ուղղում:
   դ. Տեքստային հաղորդագրությունների ուղարկում: